

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.01-49**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ)  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյան, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրենի պարտականությունները կատարող Ս. Մուսոյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 31 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

- 2.1 Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 7 749 200 (յոթ միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
- 2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

**3. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

- 3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:
- 3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:
- 3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

**4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:
- 4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:
- 4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,  
Կառավարական տուն 2  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Կ 900011005452

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի  
անվան պետական գյուղատնտեսական  
քոլեջ» ՊՈԱԿ  
Ք.Գավառ, Ազատության 38  
ՀՀ ՖՆ գործառնական վարչության  
Հ/Կ 900178000353

Գլխավոր քարտուղարի  
պարտականությունները կատարող՝

Տնօրենի պարտականությունները  
կատարող՝

Վ. Գասպարյան  
(ստորագրություն)  
ԿՏ 02608782

Ս. Մուսոյան  
(ստորագրություն)  
ԿՏ 08402239